

Սաղարթի մէջ գնդաժպիտ
Ոսկի պտուղներ շողշողուն,
Եւ ծաղիկներ մշտափթիթ
Իմ հոգին են կախարդում:

Ա՛խ, ի՛նչ չքնաղ պիտի լինի
Անվերջ լուսոյ այն աշխարհ,
Եւ ի՛նչ անուշ ու սքանչելի
Այնտեղ օդը կենարար:

Բայց հեղեղատն իմ՝ առաջին
Մոնչում է զայրոյթով:
Նորա ալիքը մոլեգին
Պատում են ինձ սարսափով:

Ահա նաական այստեղ կանգնած,
Բայց, ա՛խ, չըկայ նաաւար...
Զառա՛ջ անար ու անկասկած —
Նա շունչ կ'առնէ քեզ համար:

Լոկ հաւատն դու աներկմիտ,
Քա՛ջ դու, սիրտ ա՛ռ ու հոգի —
Հրաշքով կ'ըացուի քո առաջիդ
Սիրուն աշխարհն հրաշալի:

Յ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ



ԱՌԱՅՈՒՆԵՐ ՏՐԱՊԷԶՐՈՒ ԳԻՒՂՆԵՐՈՅ ԲԱՐՐԱՌՈՎ:

Ըն օր թալիկը (ծնոք) կընէ, օշ 5էյս կընէ, օշ մէյս:

Ըմն ինչ բարակնալով կոտրիկու, մաշող հաստընալով:

Ըմն մաշողն իրեն պիթէմով շափ կանգոյ հաւասար) ղնափած 1 քեթան տալ շին:

Ըմն դարբա (անգամ) տէրան (Քահանայն) քաթա ուտի շին:

Ըմն մաշող դարբած տեղը խան (իջնան, պանդոկ) շին շին:

Ըն մաշող քով նիստ, օր քեզիկի լացնէ կու:

Ըն ծնոք օր չկայնում կտրի, պագնիմ, գլխուս դնիմիտի:

Ըս աուր բոն՝ արօշ մէնիք էգօն վաղում:

Ըրիկնքը խաւիճ կուտին, մեզիկի էլ տօնի շին:

Թաթաւէն՝ 1 փախա, Ծօղ (տիղմ) ընկաւ:

Թնսփելին (փոյլ) աստին, քինթո սըյթէ, աղքատ իմ, ասաց:

Թօփալ տէրան էկաւ, ցոյնի հացն էլ ոլաս էղիր:

1. Կանսիէ գործած կտաւ ամառ ժամանակ ջրի մօտ
իջ տարածնէ, շարունակ ջուր կը սրսկեն վերան, որով 3—10
աուր մէջ կսպտակի: 2. Պիտի դնիմ: 3. Թոյլ տալ: 4. Խո-
շոր հատերով անձրն:

Թօլէն էլած ունի, Թօլն 1 Թքնէ կու:

Իծուն կոնակը օր քերուի, կեշտայ հովիւի փէտին
քսուի կու:

Իմ լիքմէնը 2 առնիմ, էլտօմ ուրիշի մէսէլ ասիմ:

Ինչպք խելահասը կարգուեցաւ, խելոթին տղաքը հա-
սօն:

Ինծիկի պիտու շեղած սուրբը լնչ ընիմիտի:

Իրիկուն բօնը Թողուլ մի էգօն:

Լիզուն օսկոր շունի օր ծակէ, հա խորաթէ (խօսէ):

Լուի մը հօմար, եօրդանը (վերմակ) վառնց:

Լօաղ շատ գիտիմ, ձէն շունիմ:

Լօելաթին էմն օր զատիկ է:

Լօելահաս մաշող հիտ քար կը, խելաթին հիտ, փիւա
ուտի մի:

Լօլարը հայսնիք գնաց, իսա տունը մի տունէն պէտք
է, ասաց:

Լօելոուն հացը խելահասին փոյն է:

Լօուիք գլորեցաւ, ծափը 5 էգիտ:

Լօունիդ քեզի ըլլի, խաշը (եկեղեցի) հոտեցնել մի:

Ս. Հայկունի.



Ն. Ե. Ի. Ա. Բ. Ն. Ե. Բ.

ԿՈՐԱՎՈՒ ՈՒ ՄՈՌԱՅՈՒԱՆ ԼԱՅՆԵՐ.

(Տրապիզօնի հայ-մանստական գիւղերն, նրանց ա-
ւանդութիւնները եւ սովորութիւնները):

Ս Ե Ւ Գ Ե Տ Ը Յ Ի Գ.

(Շարունակութիւն):

ՍԵՒ ԳԵՏԱՅԻՆԻ ՀԱՅ ՄԱՆՍԷՏԱԿԱՆՆԵՐԷ
առնուած է հետեւեալ պարի երգն, որ աշըղ
վարդան ասած է:

Հօրօր 1 գարունը գայ, կուկուն 2 կու կօնէ,
կօնէ, կուկուս, կօնէ, քու բօնը բօն է.
Օտքս փուշ պատեցաւ, 3 սիյտս 4 կու խօնէ,
կօնէ, կուկուս, կօնէ, քու բօնը բօն է.

1. Մաշմուրք (շագանակ) պտղին դրսի, կանաչ եւ
փշոտ կեղեմ: 2. Քառակուսի թիթեղէ շինած փոքրիկ ա-
նոթ, ձկնիւղ կը լեցնեն, Ծրագ կը վառեն: 3. Պտուկ, կա-
նայ անօթ, որոյ մէջ կերակուր կեփեն:

4. Տես. Արարատ համար Է. եր. 39—45:

1. Երբոր: 2. Կու, աղանիկից փոքր, սեւա գորշագոյն թղ-
լունը, որ գիւղացիք սրա կանչելուն մեծ նշանակութիւն կը-
տան, առաւօտեան շուտ անկողնից բարձրանալու եւ մի քան
ուտելու են որպէսզի անօթի փորանց կկուի ծայրը շանն,
գոնէ երեք առաւօտ մի քան կերած լինելով լսելու են որ
կկուն ընտած (յաղթած) լինին:

3. Պատիւ ըստ հայաստանացոյ բարձր տեղից քան
մի ընկնի, իսկ ըստ Տրապիզօնի գիւղացոց ծայրը սուր
մի քան որպէս փուշ ասեղ եւ մախաթ մի քանի
մէջ խրուի: 4. Սիրտ:

Կոնչէ, կուկուս, բայձրի լեռներուն,
Էշտամ, զարկալովիւն, վախ իմ մեռնելուն,
Կուկուն էլ թառեցաւ ամուրի 2 պատին,
Աստուած հոգիս առնուր Մայրոմի գողին:

Կուկուն ու մեղուքին կամակ կու բերին,
Մուս կընին, Զաքարի հոգուն կու կոլին. 3
Զաքար, քու կրակն էլ շատ մաշտիկ, կերեր,
Օչ էլ Աստուած կուտեր, օչ էլ մեր կու բերեր,
Եկէք, լալով հէլալ 3 էրէք Զաքարին:

Լուսարի 6 էլուարի էլ քանի 7 քանի,
Սէրս քամի էղաւ, քունս կու տօնի,
Ըրի էշտօնք սարի սէյրօն, քա Մայրոմ,
Առնուք զիրար, օնցնինք դիմաց, քա Մայրոմ:

Օսկօ 8 էկին Օսկիատին 9 կովիրը, 10
Էկին ու էկին, իջօն հիմի փոսիրը,
Օկօնցունուն կախ ին օսկի օղիրը,
Տուէք պաշայս, 11 ես էլ էշտամ, քովիրը:

Երկուն ճէհեզը հինգ ձի բայցուցին,
Մակարն 12 էրի դուռը, զայտակ զարձուցին,
Գնա, Երզու, գնա, մէմէլ եիտ աշէ, 13
Երեսիդ մաղերը քովէ քով քաշէ:

Արագ արագ խաղալու պարի երգ:

Գեղին վերդին այտ մը գարի
Քանի քաղիմ, քամին տանի,
Երկու բիւլբիւլ մէջը բանի,
Մէկը հէյս, մէյս,
Մէկն էլ սիրելի եարս:

Քա Մայրոմ, քա Մայրոմ,
Հայտէ, էշտօնք սարի սէյրօն, 14
Խնձոր քաղիմ, գօտիդ շարիմ,
Խնձոր մ' ունիմ անուշ հոտիկ,
Հայսներ կուգօն կարմիր տօտիկ, 15
Բիր պաշ էնիմ, քնթիդ մօտիկ:

Աւտինք հացը, զայնինք պարը,
Ճիւղակ էր էլէնուն քարը, 16

Գահ կովիկս ծիծիկ կընէ, 17
Սարերն իմեր դոգիկ 18 կընէ,
Ելէքսն էլ հայսնիք կընէ:

1. Գնա: 2. Կանաչեղենի պարտէզը տանց առաջը շինած:
3. Վառել: 4. Բ տառը շատ անգամ չ եւ յ փոխուած է:
5. Նորա վերայ ունեցած քարեաց ներքը: 6. Նը եւ արի:
7. Կերելի հին երգ է, վասնզի ներկայ սերունդը փոխա-
նակ քանի քանի ասելու քօնի քօնի կասէ, որպէս
եւ ամբողջ գիտացիք:

8. Անա: 9 Աղջկայ անուն: 10 Փոխանակ ե տա-
ռի ի դրուած: 11. Բամին, մանապաճի եւ հովուին հա-
մար տրուած հացը: 12 Հարսնետը: 13 Ետեւ հայէ:

14. Սարերու այցելութիւն: 15. Փոքրիկ սիրուն ոտը:
16. Հովիտ: 17. Կովերու երբ օնցն մօտնայ ստինքներն կու-
տին կամբանան, որով կ'անցնուի թէ մըին մօտ է: 18. Գնը
կովները եւ հորթերը պաշերնին կըցցն այս այն կողմն կ'ախ-
չին խաղալով, երբեմն ազացի ճգնելով:

Եկէք, հայսներ, պար մը շփինք,
Քիչ մը թողինք 2 էլ թափթըփինք:

Մեղուքնին էլօն չեչէն
Առնուք զիրար, մտնունք քաշէն:

Դիմացն իմեր կուգաս դուն խլիվլալով,
Հագած կապած էկիդ կարմիրով ալով,
Իս քե տեսնող աշուղն էլ ժուռ կուգէր լալով:

Օղոնք կողնած էկիդ, գիտիմ թէ մեն (միայն) իս,
Հիտս չխորաթիր, 3 գիտիմ թէ քեն իս,
Կուսիրը, կաւիլէ էկիդ, օտուիդ կուղտիս, 3
Մտնելով էլլէլով փէշիդ կու մաշիս:

Օտուիդ 6 միջուտ է, մասմօնք 7 կորած,
Ես էս իսքի (զքեկ) մեն կուգէի էրած պօպկած,
Էրած ու պօպկած, վախ, գետիւնը օնցած:

Խաչին օղոնք էրկէն լորին
Մեր Մախթեցուն կարմիր ջորին,
Գնաց, մնաց գոյծել 8 հօրին:

Փերվանէի գիւղն ենք, այսօր 1878 մայիս
25-ին պիտի ճանապարհորդենք արեւմտեան հարաւ,
որպէս զի ուղղակի Հանայ, իմ նախկին պաշտօ-
նավայրս անցնիմ:

Դեռ Սե Գետացոց ստորին մասին վերայ կը
գտնուինք, դեռ նոր սկսանք բերձրանալ Էլէմնուսի
գագաթն է մեր շուրջը գիտել:

Տեսարանը հիանալի էր, բայց կը հաւատա՞ք
որ արտասուքս աչքերս լցուած, մութ ու մաշլ
տեսայ շուրջս, երևակայութեամբ Սե Գետացոց սե-
օրին մէջը ընկզմեցայ, տասն ութերորդ դարի սկիզբ-
ներն այս տեղ կատարուած այն սարսափելի անցքը ինձ
ներկայացաւ, միայն մաշլ վիճակի մէջ դէպ յարե-
կա Սե Գետացոց սահմանին վերայ իմ աչաց առջև
կարգուեցաւ Մատուռ հսկայ լեռն, որ խոյացած էր
միւս լեռներու վերայ, որ ամբողջ խմբովն մարդու
կը յիշեցնէր Բագրեանդայ հիւսիսային սահմանի
վերայ գտնուած Մատուռ եւ նորա յարեւելս տարած-
ուած Պապոյտ լեռներն:

Մատուռ լեռանց գագաթից յայնկոյս կերեւէին
Պարխար լեռանց գագաթները, որք շրջապատած էին
Սե արեւմտից երկրի շուրջն:

Մատուռից 3 ժամ ի հիւսիս Պալապին լեռն է
ուր կայ, կասեն, մի ուխտատեղի հայոց, ուր թուր-
քացեալ հայք շարունակ ուխտի կը գնան:

Երսումատ, որ Առաջին Զաքարիան էր
Փերվանցիներէն մին, կը գտնուի Մատուռից մի
ժամ հարաւ, որոյ գագաթն եւ ուխտատեղի կայ,
ուր թաղուած է, կասեն, Սե Գետացիք, մի սուրբ
մարդու մատր:

Էլէմնուսի վերայ ենք, մեզ մօտ՝ մեր աչաց

1. Պարի միջոցին հարսներն միանուագ ոտներն գետին
կը զարնեն: 2. Փռչի: 3. Դօսիլ: 4. Գոմ, անամոց քնակա-
րան, 5. Կուղի կովերու արտաքսածն է: 6. Կանեփ մանելու
մեծ փայտն, որոյ վերայ կը փաթուեցնեն շիւնկը: 7. Փոքր
փայտն է որով կ'անան կանեփը: 8. Գործելի ամուսին
կատուի, որ հորերու մէջ կը պատրաստեն լորի կամ ամրի
փայտէ եւ ջորիով կը կընեն:

առջև կը պարզուին քանի մի հայ թաղորայք, որք են Մաթթեայ 10 տուն հայ բնակչոք, ուր կուենի փայտից մարխ (խեժոտ փայտ որ կը վառեն իրեն ծրբադ) իլլալուն Մաթթեայ կասեն, Գուժուհոց, 7 տուն հայ, Մաթթեայի Բիստոցոց թաղը, 13 տուն հայ:

Բուն Մաթթեայից 1՝, Ժամ հարաւ Փերվանէի Գատրա գիւղը կը գտնուի 8 տուն հայ բնակչոք, ուր էր եկեղեցին և սւտումարանը, նաև Սաթեսթաղը, որ արեւելեան հարաւ կրննի, 15 տուն բնակչոք, Ալլաք տերէ թաղը 1, Ժամ ի հիւսիս, 7 տուն հայ:

Մաթթեայի 1՝, Ժամ արեւելեան հարաւ մեծ Մաթթեայ:

Փերվանէի Ժուժք թաղը 1՝, Ժամ հարաւ, 12 տուն հայ բնակիչ:

Մատուռից 2 Ժամ ի հիւսիս Փիրիի գիւղի սահմանէ, ուր ընտիր գիւրատաշ սպիտակ քարահանք կայ:

Աւրոյ նշանակեալ խումը մի մանր գիւղօրէից մօտ և շուջն եղող, բայց Եամուրայի կառավարութեան պատկանեալ հայ գիւղօրայք են. 1. Էլէմնոս 21 տուն, աստի 1՝, Ժամ ի հիւսիս Մաթթեայ 3 տուն, սորա արեւմուտքն 2՝, Ժամ Մանտրայ 2 տուն:

Մեր ճանապարհը շարունակեցինք, մի Ժամից իջանք Եամուրայի գետն, որոյ հանդիպակաց կողմից սկսանք բարձրանալ 3 Ժամ, քերելով այս հրակայ Մանտրա լեռան զառիվներ, բարձրանալով շարունակ հսկայ ծառներով պատած անտառային վայրն:

Այս անտառապատ լեռան կողերուն վերայ տեղ տեղ կը տեսնուին գիւղական տներ, որք 2—4 քիլոմետր իրարմէ հեռի կը գտնուին, և են թուրքացած հայեր:

Որպէս Սև Գետացիք, այս տեղ ևս իգական սեռն հայերէն կը խօսին, ունին հայկական սովորութիւններ:

Տեսայ այս անտառին մէջ հարսներ, պառաւ կանայք և աղջկուհիք, որք իրենց անասուններն բերած՝ այս անտառին մէջ տեղ գտնուած արօտավայրերը կարածեցնէին, ամէն մէկը իւր տան յատուկ անասուններն կը պահպանէին, իրարմէն հեռացած անասուններն մի վայր հաւաքելու համար քաղցր եղանակով կը ձայնէին «արի վեր, արի վեր, արիմոջ, արի մոջ, իմ անուշ կուր, էն էն կարմիր էրինջ, խառուիկ բուժիկ... սիւ մերձոն» և լինէ:

Տեսայ մի այլ աղջիկ, որ ծառի վերայ բարձրացած՝ անասնոց անուր տալով կը կանչէր, ծառից ևս մոջ 2 կը կտրեր իւր բէլճուրով, 3 անասունը լսելով իրենց տիրոջ ձայնը, բէլճոյի թղթկոյցը հեռաւոր փայրերէ տակաւ առ տակաւ բառաչելով հաւաքուեցան այն ծառի տակն ուր կայր աղջիկն:

Բարեկամ, դու եթէ այս տեսարաններու հան-

դիստես լինէիր, նաև եթէ նոցա դռներու մերձեայր, պիտի տեսնէիր թէ հարսներ ու կիներ կովերու տակ պրպղած ինչ հիանալի եղանակ մի ձգած հայերէն քաղցրաձայն կերպեն ու կը կլմեն առանց յորժիկը կովին ցոյց տալու, մինչդեռ ամբողջ Հաստանի սովորութիւնն է կովը հորժիկով կլմել, որ առանց հորժիկի երբէք կամ չեն տար, շատ անգամ հորժիկն վնասուող կովն՝ կամից կը կտրուի:

Դու ևս ինչ հետ լինէիր, սոցա մօտ հայ տիպար, հայ խօսք և սովորութիւններ տեսնելով՝ պիտի յափշտակուէիր թէ հայերու մէջ կը գտնուիս, պիտի չըզարմանաս, երբ լսես թէ սորա մահմետականներ են, շատերը կը զոյուին հայ անունից՝ թէ և Հաւատաս տեսածիդ ու լսածիդ:

Մեր ելքն արդէն Մանտրայի գագաթն էր, հասած ենք գագաթին, որպէս լեռան կողերն այնպէս ևս գագաթն մի Ժամից աւելի տալիարակի վերայ՝ մեր անցած ճանապարհի աջ ու ձախն տեսանք ածրի հսկայ ծառեր, որ Արամի օրից մնացած և ճանապարհի աջ ու ձախն մարդու հետք տեսած չէր, թէ և այս օր օդը պարզ էր, սակայն շուտով մեզն պատեց, ծառերու խիտ ծիրաբէն անձրևի շիթեր սկսան կաթկթել. մենք չորս բնկերով մտանք մի հսկայ ածրի ծառի խոռոչը, նստանք ու ոտներս պարզեցինք, եթէ մեզ հետ վեց հոգի ևս լինէին, ապահով պիտի պատսպարուէինք:

Արդէն Մանտրա լեռան արեւելեան հիւսիսային ստորոտից բարձրացած էինք գագաթն, արեւմտեան հարաւ շարունակած էինք մեր ուղին. այժմ նոյն ուղղութեամբ դարձած ենք 2—2՝, Ժամ գառիփայր մի, ուղղուելով Ապիոն գիւղի կողմն, իջանք ձորակ մի, որոյ հանդիպակաց կողմէն մի Ժամ բարձրանալով հասանք Ապիոն գիւղի եկեղեցւոյն մօտ:

Սև Գետից յարեմուտս տարածուած է Եամուրայի վիճակն, որ մինչև Տրապիզոնի մօտէն Սև ծով հօտող Տէյրիմէն գէրէ կոչուած գետոյն ամբողջ ընթացքին մէջ արեւելեան կողմն կրրածէ, ի հարաւ նա կտարածուի Գուլթա փոքրիկ նաւահանգստէն մինչև Բարեք և Վրմաշխանայի մօտերն:

Համէն ևս որ պատմագիրներէ յիշատակուած է տեղ տեղ, անցնալին մէջ ևս թշուառ անցքերու պատահած է. սա ևս տարածուած է Սև Գետէն գէպի յարեւել և առանձին ընդարձակ վիճակ մի է, մենք քանի որ Սև Գետի արեւմտեան սահմանին վրայ կը գտնուինք, մասնաւոր ինչ կանգ առնենք այստեղ, դառնանք Սև Գետի յարեւել գտնուած այս Համէնի վերայ մասնաւոր խօսիլ, ապա կը դառնանք մեր ճանապարհորդութիւնը շարունակել Եամուրայի վիճակին մէջ:

Հ. Ա. Գ. Ե. Դ.

Համէն գաւառն 1700 թուականներուն կը պարունակէր 8—10,000 տուն հայ բնակիչ, որք

1. Այս քաղաքի մասին գրում է Յովն. Մամիկոնեանն իւր պատմութեան մէջ: Առաջ ենք բերում այդ հատուածը մի ձեռագրից, որովհետեւ տպագրի մէջ չը գտանք: Վրաց վաշտեայ արքայի մասին է խօսքը. Դանց ընդ գետն ծորոխ և գնացի քաղաքն Համամայ, որ իռլի ծամբու: Սա ինքն Համամայ քանդի նորոգեաց զսա ի է. դարուն, կոչեաց յիւր անուն զքաղաքն Համամաշէն, այլ ի Ժամանակս նորին գոր-

1. Ամբողջ Սիւրմէնէի պատկանող այս ցամ ևս քիւր անտառներու մէջ կայ մօտ 80—100 տուն հայ:

2. Կարգ մի ծառներ կան, որոց տերեւներն սիրով կուտեն անասունց, որք են թեղի, կաթմուրէի, խոզկաղերի, մակի եւն. որոց ծիւղերն կտրտելով վայր կը թափեն, որ մօլ կատուի, իսկ հորթիկներու համար աւելի մատաղահասներն որ մօլ կատուի:

3. Բէլճուն թեղի և կաղնիի մեւ ունի, քերանք ևրկայ է ձայնն քիթ ունի, որով ծառերն կը յօտեն:

նոյն թուականներուն ենթերիններու արդեցութեան ներքոյ թուրքացած են և ուր այս օր կը տեսնուին մեծ մասամբ հայախօս մահմադականներ:

Որպէս կաւանգէն, Անդոյ աւերումից յետոյ փախստականաց մէկ մասն ապաստանած է Համշէն, որ աշխարհի ստեղծմանէ ի վեր մարդու երես չէր տեսած: Հսկայ լեռներով և խիտ անտառներով պատած, այս տեղս ապաստանած են հարուստ հայեր, որ անտես մնան բարբարոսներու աչքից, և յիրաւի երկար միջոց անյայտ են մնացած, անտառները կոտորած և շինութիւններ են շինած:

Համշէնի վիճակն բռնած է Սպերի և Իրիզէի միջավայրն, Սպերից սկսած գետի մը երկու հովիտներն կը գրաւէ, որ հինաւուրց հսկայ անտառներով պատած է, և շրջապատուած է նաեւ հսկայ լեռներով:

Խաչավանք սարից Թերեխիմ սարի երեսը անցնելու համար մի լճակի եզրից պիտի անցնենք, որ ձկներով առատ է և որի շրջապատը կարելի է կրտրել 20 վայրկեանում:

Քեօզցեր լեռան վերայ ևս լիճ մի կայ. Այդը կեօլ անունով:

Այս լճերն երկու գետերու սկզբնաւորութիւն են, մին 6 ժամու ճանապարհ Սպերի կողմն հոսելով ձորովի կը խառնուի, որը ևս կը հոսի Սև ծով 5 ժամ Իրիզէի արեւմտեան կողմից:

Ճեմել գետն արեւմտեան կողմը հոսելով կիջնայ՝ աջ կողմից Կալապատոմուզի կը խառնուի, Ճեմել գետոյն ակնեւուն մօտ կան Վանէ և Վաւ կամէ երկու գիւղեր, որոց միջավայրէն մի ջուր կը հոսի, այս ջրի մի մասը կը քարանայ, միւս մասն Իրիզէի Գարադէրէն 4 կը հոսի, որը և քիչ միջոցի մէջ Կալապատոմուզի կը խառնուի:

Բուն Համշէն կըսկի Եօթը—Փարայ գիւղից, որ Իրիզէից 24 ժամ բարձր է, Եօթը—Փարայ գիւղից 8 ժամ բարձր է Համամշէնի Գարադէրէն, որ Կալապատոմուզի կը խառնուի:

Կալապատոմուզի կը խառնուին նաեւ Խալա Փուրթունայ և Սենոզօր գետակներն:

Կալապատոմուզի գետի ակին վերայ կայ Մանլի գիւղն, սորա մօտերն երեան ելաւ մի հինաւուրց շէնք, որ հեղեղք բացած էին. 1861 թուականին երկրացիք գանձ գտնելու յուսով քանդելու փորձ փորձեցին, սակայն իրենց աղան չէ թողուցեր առարկելով թէ սրբավայր է, մեղք է:

Մափաւրի գետն ևս կը հոսի Սև ծովը Իրիզէից չորս ժամ, յարեւելս, որն ևս Համշէնի լեռներէն կիջնայ, Զուղայ գետոյն հետ միանալով ծովը կը թափի, անցնելով Պատաոս գիւղից, Զուղայ

ծնցան յայտ քաղաք, քանդի նոյն ինքն արքայն Վրաց սրով եւ ջրով գերեաց զքաղաքն եւ զքանանայս, եւ զպախոպոս նորա զՄանկինոս սպան յեկեղեցոյն քաղաքին կողեցնելոյ Ս. Սիծն եւ յայնմանէ ըստ ասելոյ պատմագրի զանձն ընկալաւ քաղաքն յպախոպոսն թէ եղիցի քաղաքս այս խոպան եւ աներակ եւ ոչ ոք իցէ որ քնակիցէ ի սա յախոտանս յախոտնից: Փոքր ինչ յետոյ գրում է. Երեք հազարք ի միում գիշերի սատակեցան, եւ այլքն փախեան թափոք եւ անհրկ թողեալ զքաղաքն: Այլ որպէս թուի վերստին նորոգեցաւ քաղաքս թէն ոչ ըստ առաջնոյն. Տես զՀամշէն ի նոր Հայաստան. Թղթ. 393—398:

1. Գարա—դէրէ առուան նրկուք է, մին բուն Գարա—դէրէն, որ Սև Դետացոց նրկերն է, նրկորդն իրիզէի մօտ գտնուած գետի մը անունն է Եգերացոց մէջ:

Լազի լեզուով ծով կը նշանակէ և լազուտ, թերեւս լազուտի բոյսի առատութեան համար Զուղայ ասուած է:

Վերին Կայէ գետակն 2 ժամ ընթացքէ յետոյ՝ արեւելեան եզրից Փուրթունայ (բուք) գետին կը խառնուի Զաթիոսի մօտ՝ Թերեխիմ հովտէն անցնելով, Փուրթունան Խաչավանքի սարից կիջնայ, Արտաշէնից կանցնի, և Ագինայէն 2 ժամ յարեւելս Սև ծով կը թափի, Այս գետը խիստ խոր աւազան ունի, ջուրը միշտ առատ է, շատ անգամ աւազանից դուրս կը թափի, շրջականերուն կը վնասէ, թերեւս այս աւերմանց պատճառաւ Փուրթունայ ասուած է:

Համշէն լեռնային և անտառային երկիր է, Անիի գաղթականներն ապահով վայր մը գտնելու համար յառաջ մէկ մասն այս տեղ ապաստանած են բայց կերևի այս տեղ ևս չեն կարողացած ապահովութիւն գտնել. ստիպուած են այլ և այլ լեռներու գլուխներն բերդեր կառուցանել և գիմարդել թըշնամոյն:

Արգէն շատ մը բերդերու բեկորներ կը տեսնուին:

Ըստ աւանդութեան երբեմն ևս հայ իշխաններ իրարու դէմ պատերազմած են:

Երբեմն ևս թուրքացած յոյներու և լազերու հետ պատերազմներ մղած են:

Այժմ ևս թշնամութիւնը կը շարունակուի:

Պաթումից մինեւ Տրապիզոն ծովեզերեայ երկիրներն բռնած են թուրքացած վրացիք, լազք և յոյք, իսկ որոց հարան հայ թուրք:

Իրիզէի և Ագինայի գաւառներն տարածուած են լազք (եգերացիք), որք ունին իրենց յատուկ լեզուն:

Օ՞ք որ Սիւրմէնէի արեւելքն է, ամբողջովին թուրքացած յոյներ են, յունարէն կը խօսին, սոցա մեծ ու փոքրը մօլլա են, ուրիշ գործ չունին, այլ և այլ գիւղեր կը տարածուին, կրօնական արարողութիւն կը կատարեն:

Աղօթքի մէջ միայն արարերէն կը կարգան, իսկ միկիմից դուրս բառ մը անգամ չեն կարող խօսիլ թուրք լեզուաւ:

Թուրքացած հայեր աւելի քաջ են քան վրացի, լազ և յոյն, որք հայթուրքերու աղջիկ չեն տար:

Հայ թուրքն ունի վեհանձն պարզ բնութիւն, չի գիտէր խարդախութիւն, քաջ է՝ ծագու նիւթ արած են օֆցիները, որք քսու, խարդախ և անխելք են, նաեւ ատելի մինչև իսկ ամեն տեղ:

Համշէնի և Սև Դետի միջավայրը կայ բարձր գիւղերի վրէլ Զիլ Գալէ անունով բերդ մի, որ աւանաւանք կասեն թէ 50 կանդուն բարձրութիւն ունի սորա պարիսպներն, որ սրբաւառ քարով հիւստուած է, Այս բերդի գլխից ներքնուղի մի բացուած է երկու ժամու ճանապարհ մինչև լեռան ստորոտը, Այս ներքնուղւոյն իւրաքանչիւր քայլի վերայ մի մի զինուոր կանգնած են եղեր, և բերդի քարերն ձեռքէ ձեռք տալով բերդին դուրս հանած և շինած են:

Ըստ աւանդութեան թաղաւորական ցեղէ երկու անուանի մարդ կը լինին Համշէնի մէջ Գրիգոր և Մարտիրոս. Մարտիրոս Գրիգորի աղջիկը կուգէ իւր որդւոյն Արտաշէնի համար, Գրիգոր չի յօծարիր սուլ. Մարտիրոս գինու զօրութեամբ Գրիգորի երկիրը կը մտնէ, կը պատերազմի, կը յաղթէ, կառնէ աղջիկը, կը պսակէ Արտաշէնի վերայ:

Արտաշէն Գրիգորի երկրին մէջ, Համէնի մեծ գետի վերի ակնբուն մօտ մի հսկայ բերդ կը կառուցանէ: որ այս օր Եւ Արտաշէն կասուի:

Համէնցիք Տրապիզոնի հայ գիւղացւոց տիպարն ունին, ըստ տեղւոյն պիտի խօսիմ՝ Տրապիզոնի գիւղացւոց վարուց բարուց և երկրի գրեց վերայ:

Համէնի անտառներու մէջ հազարաւոր տարեկան ծառերու և փայտերու մէջ հարիւրաւոր տարուան մեղր կայ իրարու վերայ գիղուած և բիւրեղացած, զորս առատօրէն տակառներով կը բերեն Տրապիզոն վաճառելու: որ ուրազով կամ կացնով հազիր հազ կը կարողանան մաս մաս բաժանել:

Անիի յիշատակներն որոնողները թող մտնեն այս ընդարձակ և անտառաշատ երկիրն, մեծ պաշար պիտի հայթայթեն:

1840 թուականներուն Համէնի և Սև Գետացոց մէջ գարձեալ մեծ ձնշուժ եղաւ թուրք մուլաներու կողմէ, որ այլևս հայերէն չխօսին. «Հայերէն եօթը բառ մի հայհոյութիւն է» ասացին: մօլլաները անէ տուն մտան, ստիպեցին հայերէն խօսիլն արդիւնէլ, կանայք նեղ մնալով քանի գիւղերից փախի հարուածներով արտաքսեցին զմուլաններն, իսկ այր մարդիկ երկիւղ կրելով թէ կոտորած առաջ պիտի գայ, կը հաւաքուին իրենց աղայի մօտ ուր որոշում կանեն թէ ով որ հայերէն խօսի իրենց աղային հինգ ոչխար տուգանք տայ:

Եւ այս հետեւեալ դէպքն առած դարձած է ժողովրդեան մէջ, նոյն իսկ Սև Գետացոց և Համէնցոց մէջ, նաև սորա նման շատ առաձներ:

— Մի օր կարաւան մի կազմած և ջորիներուն ցորեան բարձր Բարերդէն երբ կը գառնային, մէկին խուրճը պատռեցաւ, ցորեանը սկսաւ հոսիլ, սորա տէրն ձայն ձգեց ընկերներէն մէկուն, ծօ, Մանուկ օղլի հասան, Մախաթ նիւր է, ցորեն թնօքիւտի, Հասան իրրե թէ հայերէն չխօսիր կը պատասխանէ. — ծօ, հէյերէն խորաթնցիր, աղայա պէշ (աղային հինգ) օչխար վերէճէքսուն (պիտի տաս):

— Թող յլէ օլսուն (այնպէս լինի) մախաթ մախաթ նիւր է: — Ծօ, քեզիկի չաստի մախաթ գաթըն (ջորիին) ձակատինտա տուր: — Ծօ, դուն էլ հէյերէն գօնուշտուն, աղայա պէշ օչխար ասաց երկրորդն առաջնոյն:

— Ծօ, ինց օլիմ, թող յլէ օլսուն, իդա շօնլախոյա սէպէս օլտի:

Երկուքն ևս հինգ հինգ ոչխար տուգանք տուին, աղան տեսնելով որ մէջն մեծ շահ կայ, հետամուտ եղաւ, ամեն կողմ լրտեսներ գրաւ որ հայերէն չը խօսեն:

Հայկունի.

(Շարունակելի)

1. Ընկուզի կոծող հաւաքելու համար այս երկիր մտնող հայք կը հաւատացնեն թէ քաղմթիւ տներու մէջ տեսած են եկեղեցական ֆին անօթներ, որք իրրե նոսրական կամ սրբութիւն մի պահած են, այլ եւ ուրիշ հոտիւններ, ծնողները նշն. որ ինձ շատ հաւատալի է, նորա համար որ հաւատարիմ անձերէ լաճ եմ:



ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ—ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԳՊՐՈՅՆԵՐԸ ԿԱՄ ՄԱՆԿԱՆՅ
ԺԱՄԱՊԱՇՏՈՒԹԻՒՆԸ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ

Նոր չէ այն գաղափարը, որ եկեղեցու մէջ կրօնական կեանքը վառ պահելու և զարգացնելու համար՝ մանուկների կրօնական դաստիարակութեան վերայ առանձին ուշք դարձնել պէտք է և որ այդ դաստիարակութեան մեծապէս նպաստել կարող է նոցա ըմբռնման յարմարեցրած ժամապաշտութիւնը: Գեո 1429 թուին սքոլաստիկ Գերսոնը լուրջ ուշադրութիւն էր հրաւիրում այդ խնդրի վերայ՝ այն համոզմամբ, որ «եկեղեցւոյ վերանորոգութիւնը մանուկներից պէտք է սկսի»: Բնական է, որ այդպիսի մի վերանորոգութեան ձգտումով յառաջ եկած յեղափոխութիւնը (Ռեֆորմացիան) առանձին զարկ պէտք է տար մանուկների կրօնական դաստիարակութեան գործին: Բողոքականութիւնը վերցնելով եկեղեցու միջից ծէսեր, արարողութիւններ, պատկերներ, տօնախմբութիւններ՝ և այդ բոլորի փոխարէն սարգ խօսքը միայն պահելով՝ բոլորովին տգէտ մարդու և ի մասնաւորի մանուկների համար անհետաքրքիր և անմատչելի էր դարձնում ժամապաշտութիւնը: Այդ կարիքի առաջն առնելու՝ մանուկներին և հասարակ մարդոց քրիստոնէական վարդապետութեան ամենատարրական գիտելիքները հաղորդելու համար, որպէս զի նոքա եկեղեցում կարգացուած ս. Գրքից և խօսուած քարոզներից մի բան հասկանան, Լուտեր կազմեց փոքր հաւատապատումը, որ մինչև այժմ էլ բողոքական եկեղեցու գլխաւոր դաւանական գրքերից մէկն է՝ բացարձակապէս իշխող կրօնի դաստառութեան վերայ և որի դաւանական ճշդութեան ու գործնական արժէքի մասին հիացումով են խօսում միշտ բողոքականները: Այդ հաւատապատումը, Լուտերի յօրինած եկեղե-